



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«30» 05 2024թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 068 - 24

Նախաձեռնող՝

«Նարար» ՍՊԸ

ք. Երևան, Կենտրոն, Տպագրիչների փ., 2, բն. 47

Գործունեությունը՝

Շղարշիկի տուֆերի հանքավայրի Հյուսիսային
տեղամասում երկրաբանական ուսումնասիրություն
Արագածոտնի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 068 - 24

«30» Մայիսի 2024թ.

Շղարշիկի տուֆերի հանքավայրի հյուսիսային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝	«ՆԱՐԱՐ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Տեղադրման վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք Շղարշիկ բնակավայր

Ներածական մաս. Արագածոտնի մարզի Շղարշիկի տուֆերի հանքավայրի հյուսիսային տեղամասում «ՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (<Օ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի «ա» ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Երկրաձևաբանական տեսակետից Շղարշիկի տուֆերի հանքավայրի հյուսիսային տեղամասի տարածքը ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որին բնորոշ է լավաներով ծածկված, սարավանդներով և ձորակներով կտրտված լանդշաֆտը: Ռելիեֆին բնորոշ են հրաբխաէրոզիոն ձևերը, մակերևույթի խիստ կտրտվածությունը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հողմահարությունը:

Նկարագրական մաս. Շղարշիկի տուֆերի հանքավայրի հյուսիսային տեղամասը տեղադրված է Արագածի հրաբխային զանգվածի հարավարևմտյան լանջի սարավանդային մասում և զբաղեցնում է 2.93 հա տարածք: Այն ներառված է Թալին խոշորացված համայնքի Շղարշիկ գյուղական բնակավայրի սահմաններում՝ գտնվելով մոտ 400-450 մ հեռավորության վրա, Եղնիկ բնակավայրից՝ 0.7կմ, Իրինդից՝ 2.0 կմ, Կաթնաղբյուրից՝ 2.4 կմ հեռավորությունների վրա: Տեղական նշանակության ավտոճանապարհն անցնում է Հյուսիսային տեղամասից 72-470 մ հեռավորության վրա: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը համայնքային կադաստրային քարտեզներում հաշվառված է գյուղատնտեսական նպատակային նշանակության հող որպես արոտավայր:

Սողանքային մարմիններ հայցվող տեղամասի տարածքում չեն արձանագրվել:



Շղարշիկի տուֆերի հանքավայրի հյուսիսային տեղամասի շրջանի ջրային միավորը Սելավ Մաստարան է, որի հիմնական հունն անցնում է հայցվող տարածքից ավելի քան 20կմ արևմուտք: Բուն տեղամասը ջրագուրկ է:

Տեղամասի տարածքում չեն արձանագրվել էնդեմիկ, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներ, չեն դիտարկվել խոշոր կաթնասունների բներ և որջեր, ինչը պայմանավորված է նաև ուսումնասիրվող տեղամասի հարակից տարածքներում իրականացվող հանքարդյունահանման աշխատանքներով:

Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ: Ազդակիր Շղարշիկ բնակավայրի պատմամշակութային հուշարձանը գտնվում է հյուսիսային տեղամասի տարածքից մոտ գտնվող 0.7-1.18 կմ հեռավորության վրա:

Հայցվող տարածքը սահմանափակող եզրային կոորդինատները՝ ArmWGS-84 միասնական համակարգով հետևյալն են՝

N	X	Y
1	8411144.0	4475247.0
2	8411160.0	4475312.0
3	8411237.0	4475398.0
4	8411315.0	4475484.0
5	8411389.0	4475464.0
6	8411344.0	4475377.0
7	8411294.0	4475294.0
8	8411266.0	4475228.0

Սույն նախագծով նախատեսվում է կատարել տեղամասի տարածքի 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ:


Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով, 96 մմ-112 մմ տրամագծերով՝ ԳԱԶ 66 ՈՒԳԲ -1 ՎՍ տիպի ինքնագնաց հորատող սարքի միջոցով: Հետախուզվող տեղամասում օգտակար հանածոյի եզրագծման և ըստ խորության ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 8 հորատանցք մինչև 20.0 մ խորությամբ, ընդհանուր 160.0 մ ծավալով, որը ենթակա է փոփոխման՝ կախված երկրաբանական աշխատանքների արդյունքից: Հորատահանուկի նվազագույն ելքը կկազմի 80-85%:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը և փորձնական հանույթի բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Դրանց ծավալները հետևյալն են՝ ըստ տեսակների.

- հորատահանուկի փաստագրում - 160.0 մ,
- փորձնական բացահանքի փաստագրում - 50.0 մ:

Տուֆերի լեռնային զանգվածից պատքարի ելքի տոկոսը որոշելու համար նախատեսվում է մեկ փորձնական բացահանքի անցում՝ լեռնային զանգված 875.0 մ³ ընդհանուր ծավալով, որից 150.0 մ³ թարմ չհողմնահարված տուֆերից:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից ու բացահանքից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 28 հանուկային նմուշ մինչև 5.0 մ երկարությամբ, 2 մենաքար



բացահանքից, ինչպես նաև 2 նմուշ՝ պետրոգրաֆիական ուսումնասիրությունների ու 2 նմուշ՝ քիմիական կազմը որոշելու համար:

Տեղամասի տարածքում զարգացած են 0.1-0.3 մ հզորությամբ ուժեղ քարքարոտ, հողմահարված ավրակարբոնատային սևահողերը: Հետախուզական աշխատանքներով խախտվելու է ընդամենը 350 մ² տարածք փորձնական բացահանքի սահմաններում, որը նախատեսվում է ռեկուլտիվացնել:

Հաշվի առնելով տեղամասի ռելիեֆը և արդեն իսկ գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները՝ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատման հրապարակների և ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Հողի վերին շերտի պահպանության նպատակով նախագծով նախատեսվում է փորձնական հանույթի ժամանակ հանել հողի շերտը, պահեստավորել, իսկ աշխատանքների ավարտից հետո լանդշաֆտի վերականգնման նպատակով բացահանքի տարածք լցված և հարթեցված փուշտա շերտի առաջացումները ծածկել հողաշերտով: Վերականգնումն իրականացվելու է ձեռքով: Ռեկուլտիվացիայի ենթակա հողաբուսական շերտի ծավալը կազմում է 105.0 մ³:

Աշխատանքների ավարտից հետո կկատարվի հորատման հաստոցի տեղակայման վայրերի փխրեցում:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրագործման համար նախատեսվում է 248.3 հազ. ՀՀ դրամ:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային ջրային հոսքեր չկան: Չկան նաև ստորգետնյա ջրերի հորիզոններ, ինչը կապված է տարածքում հրաբխային տուֆերի բնական ծակոտկենության և ճեղքավորվածության հետ:

Խմելու և կենցաղային նպատակներով օգտագործվող ջուրը նախատեսվում է գնել մոտակա բնակավայրերի առևտրի կետերից, շշալցված տարբերակով, յուրաքանչյուր օր և տեղափոխել տեղամասի տարածք:

Փոշենստեցման նպատակով աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է ջրցանում տեղամասի ճանապարհի երկայնքով, հորատման հարթակների և փորձնական բացահանքի սահմաններում: Փոշենստեցման նպատակով անհրաժեշտ ջուրը նախատեսվում է գնել պայմանագրային հիմունքներով:

Ընկերության կողմից 2023 թվականի հոկտեմբերին կատարվել է տեղամասի տարածքի մթնլորտային օդի աղտոտվածության դիտարկում, ինչը հիմք է հանդիսանալու երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում մշտադիտարկումների իրականացման և հնարավոր փոփոխությունների գնահատման համար:

Հիմնական բնապահպանական ռիսկեր կարող են պարունակել տուֆերի հետախուզման աշխատանքների ընթացքում փոշու և վնասակար գազերի արտանետումները, որոնք կապված կլինեն հորատման և փորձնական բացահանքի, ինչպես նաև ավտոտրանսպորտի շահագործման հետ:

Տեղամասի տարածքում նախատեսվող աշխատանքների իրականացման ժամանակ վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) և փոշու առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ուսումնասիրվող տարածքում աղմուկի առաջացման աղբյուր կարող են հանդիսանալ փորձնական բացահանքում իրականացվող աշխատանքները և հորատումը:

Տեղամասում հորատման և փորձնական արդյունահանման աշխատանքներից առաջացող գումարային հաշվարկային ծայնային բնութագիրը կազմում է 60դ.ԲԱ: Աղմուկի մակարդակը Շղարշիկ գյուղի մոտ կկազմի 35 դ.ԲԱ (նորման 45դ.ԲԱ): Հետևաբար, տուֆերի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ առաջացող աղմուկն ու



թրթռումը հարակից բնակավայրերի տարածքում կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների փուլում առաջացող թափոններն են՝ չտեսակավորված կենցաղային աղբ, հորատման թագիկների թափոններ, փորձնական բացահանքի անցման ժամանակ առաջացող 620 մ³ ծավալով փուշտա շերտի հողմահարված տուֆեր: Երկրաբանական աշխատանքների տեղամասերում թափոնների կուտակում կամ պահեստավորում չի նախատեսվում, դրանք առաջանալուց հետո անմիջապես կտեղափոխվեն: Աշխատանքների ընթացքում գոյացող թափոնների առաջացման հակիրճ բնութագրերը, թափոնների քանակների, տարեկան ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը, նախատեսվող բնապահպանական և կառավարմանն ուղղված միջոցառումները ներկայացված և նկարագրված են հայտում, թափոնների կառավարման պլանում:

Համաձայն հայտի՝ նախատեսվում են նաև անբարենպաստ պայմանների, հնարավոր արտակարգ ու վթարային իրավիճակների դեպքում մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք տրված և նկարագրված են հայտի համապատասխան բաժիններում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ազդեցությունը կանխարգելելու, մեղմելու, նվազեցնելու նպատակով նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ/մշտադիտարկումներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ժամանակին և հավաստի տեղեկատվություն ստանալ շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա (հող, ջուր, օդ, կենսաբազմազանություն) եղած բոլոր ազդեցությունների վերաբերյալ և ժամանակին կարգավորել՝ սահմանափակել դրանք: Շրջակա միջավայրի պահպանության նպատակով մշակված մեղմացնող միջոցառումները նախատեսվում են աշխատանքների ընթացքում:

Տեղամասում տեղադրվելու է շարժական վագոն-տնակ՝ աշխատակիցների հանգստի և սննդի ընդունման համար հարմարավետ պայմաններ ստեղծելու նպատակով: Ջրցուղարան չի նախատեսվում, քանի որ բոլոր աշխատակիցների համար Շղարշիկ բնակավայրում վարձակալվելու է կենցաղային հարմարություններ ունեցող տուն, որը նաև թույլ կտա նվազեցնել կենցաղային կեղտաջրերի արտահոսքը դեպի շրջակա տարածքներ:

Պարճառաքանական մաս.

օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Արագածոտնի մարզի Շղարշիկ բնակավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Արագածոտնի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Հանրային քննարկման ժամանակ բնակիչներից մեկ մասնակից հանդես եկավ մտահոգող հարցադրումներով, որը վերաբերում էր հիմնականում փոշու արտանետումներին և կենդանիներին արոտավայր տանող ճանապարհներին: Բոլոր հարցերին տրվեց լիարժեք պատասխաններ և պարզաբանումներ, իսկ ընդհանուր համայնքի բնակիչների կողմից նախատեսվող գործունեությունը հավանության արժանացավ:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ



մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է բացառել ուսումնասիրվող տարածքի անմիջական հարևանությամբ գտնվող մասնավոր սեփականության իրավունքով ծանրաբեռնված արտավայրերում և վարելահողերում որևէ աշխատանքի իրականացումը՝ մասնավորապես հողային շերտի վնասումը և գյուղատնտեսական գործունեության վրա բացասական ազդեցությունը:
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
3. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշման պահանջներով՝ իրականացնելով նախնական գնահատման հայտով ամրագրված շրջակա միջավայրի բաղադրիչների՝ հողի, օդի, ջրերի, կենսաբազմազանության մշտադիտարկումներ, արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:
4. Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին:
5. Նախատեսվող գործունեության ընթացքում ջրամատակարարումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՆԱՐԱՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Շղարշիկի տուֆերի հանքավայրի հյուսիսային տեղամասում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝

Սվետլանա Կիզիրյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան